8 սեպտեմբերի 2020 թ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կամավորական աշխատանքը կանոնակարգող իրավակարգավորումների վերաբերյալ[1]

Հայաստանի աշխատաշուկայում, ի թիվս տարաբնույթ խնդիրների, առկա են նաև կամավորական գործունեության (աշխատանքի) կարգավորմանն առնչվող բացեր: Թեև կամավորական գործունեությունը բովանդակային առումով նույն աշխատանքային գործունեությունն է՝ առանց փոխհատուցման, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի կարգավորում համապատասխան իրավահարաբերությունները: Փոխարենը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկվում է կամավորական գործունեությունը կարգավորող առանձին օրենք:

Հարկ է նկատել, որ կամավորական գործունեությանն (աշխատանքին) առնչվող հարաբերությունները կառուցվում են կամաարտահայտման ազատության դրսևորման առավելագույն աստիճանի վրա, ուստիև դրանք պահանջում են խիստ սահմանափակ շրջանակի հարցերի կարգավորում՝ հիմնականում, կողմերի իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու և կամավորական ուժի շահագործումը կամ այլ կերպ չարաշահումը բացառելու նպատակով: Ոլորտը կարգավորող առանձին օրենք նախաձեռնելու պարագայում կարգավորման ենթակա հարցերի շրջանակը արհեստականորեն ուռճացվում է և ավելորդ ծանրաբեռնում իրավահարաբերությունները, մինչդեռ հարկավոր է ապահովել բավարար ճկունություն կամավորական աշխատանքի կազմակերպող կառույցի և կամավորի փոխհամաձայնեցված գործողությունների համար:

Կարծում ենք՝ ողջամիտ է կամավորական գործունեությունը (աշխատանքը) դիտարկել աշխատանքային օրենսդրության շրջանակում և դրան անդրադառնալ ներկայումս մշակվող համապատասխան բարեփոխումների հայեցակարգում՝ սահմանելով նվազագույն պահանջներ:

Առաջարկություն.

Կամավորական գործունեության (աշխատանքի) հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավադրույթները նախատեսել ՀՀ աշխատանքային նոր օրենսգրքի նախագծում՝ առանձին գլխով՝ հաշվի առնելով և ամրագրելով հետևյալ իրավակարգավորումները.

1. սահմանել, որ աշխատանքային օրենսգրքի համապատասխան գլխով նախատեսված իրավանորմերը կարգավորում են Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող կամավորական գործունեության (աշխատանքի) հետ կապված հարաբերությունները.
2. օրենսդրական կարգավորումից դուրս թողնել այն դեպքերը, երբ կամավորական գործունեությունը կազմակերպում են չգրանցված հասարակական միավորումները կամ ֆիզիկական անձինք կամ այն կազմակերպվում է արտակարգ իրավիճակներում՝ դրանց հետևանքները վերացնելու նպատակով.

[1] Սույն փաստաթղթում ներկայացվող առաջարկությունները ոչ ամբողջությամբ են կիրառելի փորձնակների համար, ուստիև վերջինների ներգրավման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում անհրաժեշտ են լրացուցիչ կամ փոխարինող կարգավորումներ:

3. սահմանել կամավորական աշխատանքի հասկացությունը՝ ամրագրելով, որ կամավորական աշխատանքը ոչ պարտադիր, չվճարվող աշխատանք է, որն անհատներն իրականացնում են սեփական կամքով՝ նպաստելու առանձին կազմակերպությունների կազմակերպական նպատակների իրականացմանը.
4. սահմանել կամավորի հասկացությունը՝ ամրագրելով, որ կամավոր է համարվում Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության այն քաղաքացին, որն առանձին կազմակերպության/կազմակերպությունների համար կատարում է ոչ պարտադիր, չվճարվող աշխատանք.
5. ամրագրել, որ կամավոր աշխատանք կարող է կատարել տասնվեց տարին լրացած, օրենքով սահմանված կարգով լրիվ ծավալով աշխատանքային գործունակություն ձեռք բերած յուրաքանչյուր անձ, ինչպես նաև մինչև տասնվեց տարեկան անձը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ կամ ներկայությամբ.
6. սահմանել, որ կամավորական աշխատանքի կազմակերպիչ կարող են հանդիսանալ պետական և համայնքային կառույցները և ոչ առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ վերջինների ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում և, համապատասխանաբար, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից հանել ձեռնարկատիրական գործունեության մեջ կամավորներին ներգրավելու արգելքը.
7. ամրագրել կամավորական աշխատանք կազմակերպելու արգելքը առևտրային կազմակերպությունների կողմից, միաժամանակ նախատեսելով առևտրային կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության ծրագրերում կամավորների ներգրավման հնարավորությունը կամավորական աշխատանքի կազմակերպիչ լինելու իրավունք ունեցող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով.
8. ամրագրել, որ կամավորական աշխատանքն իրականացվում է կամավորի և կամավորական աշխատանքի կազմակերպչի փոխադարձ համաձայնությամբ՝ որպես իրավահարաբերությունների ամրագրման հիմք նախատեսելով կողմերի համաձայնությամբ կնքված կամավորական աշխատանքի մասին պայմանագիրը կամ կամավորի հաճախումների գրանցամատյանը՝ կախված կամավորի ներգրավման ծավալից և աշխատաժամանակից.
9. ամրագրել մեկանգամյա, կարճաժամկետ ու երկարաժամկետ կամավորների տարբերակումը, սահմանելով հետևյալը.
    a. մեկանգամյա կամավորությունը պարտադիր չէ գրանցման և հաշվետվողականության համար,
    b. կարճաժամկետ կամավորական աշխատանքի աշխատաժամանակը չի կարող գերազանցել շաբաթական 10 ժամը կամ ամսական 40 ժամը և ենթակա է արձանագրման կամավորի հաճախումների գրանցամատյանում, կամ, ըստ կողմերի ցանկության, կարող է կարգավորվել կամավորական աշխատանքի մասին պայմանագրով.
    c. երկարաժամկետ կամավորական աշխատանքի աշխատաժամանակը գերազանցում է շաբաթական 10 ժամը կամ ամսական 40 ժամը և կարգավորվում է կողմերի համաձայնությամբ կնքված՝ կամավորական աշխատանքի մասին պայմանագրով.
10. ամրագրել, որ երկարաժամկետ կամավորական աշխատանքի մասին պայմանագրի հիման վրա աշխատող կամավորները պետք է գրանցվեն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համակարգում.

11. նախատեսել կամավորական աշխատանքի կազմակերպչի կողմից կամավորի կատարած ծախսերի փոխհատուցման պահանջ՝ հաշվարկման համար հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ աշխատողների ծախսերի փոխհատուցման իրավակարգավորումները, այդ թվում՝ կամավորի կողմից կամավորական աշխատանքի կատարման հետ կապված փոխհատուցման վճարները (օրինակ՝ գործուղման ծախսերը) հաշվառելով որպես նվազեցվող եկամուտ, և համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարել հարակից օրենքներում.
12. նախատեսել, որ կամավորի և կամավորական աշխատանքի կազմակերպչի միջև առկա իրավահարաբերությունները կարող են դադարել մյուս կողմին առնվազն 3 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով, կամ կողմերի համաձայնությամբ նախատեսելով այլ ժամանակ.
13. կամավորի աշխատանքի արդյունք հանդիսացող նյութի/պրոդուկտի նկատմամբ կողմերի իրավունքների հաստատումը և դրա պայմանները նախատեսել պայմանագրով.
14. ամրագրել, որ կամավորական գործունեության շրջանակներում վնասի հատուցման, երրորդ անձի նկատմամբ պատասխանատվության, առողջության ու անվտանգության ապահովման հարցերը կարգավորվում են՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատողների համար նախատեսված իրավակարգավորումները, ընդ որում՝ կամավորական աշխատանքի կազմակերպիչը բոլոր վերոնշյալ խմբերի կամավորների համար ապահովում է առնվազն միևնույն աշխատանքային և անվտանգության պայմանները՝ ինչը որ համարժեք աշխատանք կատարող այլ աշխատակիցների համար.
15. կամավորական աշխատանքային հարաբերություններից ծագող վեճերը ենթակա են դատական կարգով լուծման՝ աշխատանքի պրոդուկտի նկատմամբ իրավունքի վիճարկման և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ ստաժի հաշվարկման մեխանիզմների կիրառման խնդիրներով՝ հաշվի առնելով, որ այլ իրավունքների ոտնահարումների պարագայում կամավորական աշխատանքի կազմակերպիչը և կամավորը ազատ են դադարեցնել համագործակցությունը.
16. կամավորական աշխատանքային իրավահարաբերությունները կամավորական աշխատանքի կազմակերպչի նկատմամբ որևէ արտոնության կիրառման հիմք չի կարող հանդիսանալ.
17. համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել կամավորական գործունեության իրավակարգավորումներ պարունակող հարակից օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
Ժուռնալիստների «Վսպարեզ» ակումբ
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ